



ՉԱՐՔԵՆԱԲԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՍՊԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՔԻ ՕՐԻՔԸ

Redaction du journal
"Charjourn"
Varna (Bulgarie)
(20 ԱՍՏՈՒՄԻՄ)
Պաշտոնյա համար 405
15 ԱՍՏՈՒՄԻՄ

Պաշտոնյա համար
սարկա՛ 12 ֆր
վճարված 6
Առատակահեղի
համար սարկա՛ 15
վճարված 8
Տարեկան համար 3 ֆր
վճարված 1.50
ԿԱՆՔԻՆ ԿՆՈՒՄԻՆ
Գրականության համար 40 ֆր
վճարված 20
Կրթականության համար 20 ֆր
վճարված 10

Համարյա համար 405 10 սանթիմ

ՉԱՐՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՔԻ ՕՐԻՔԸ

ՆԱԽ ԶՏՈՒՄ

III

Զուտ, անխառն ապստամբ տարրն էլ մեր մէջ, ինչպէս և ամեն ժողովրդի մէջ, երկու տեսակի է լինում: Ա. — գիտակից, զարգացած և զազափարձած ապստամբներ. Բ. — միայն զգացմունքով, զէպի թշնամին միայն ատելութեամբ ու վրիժառութեամբ լցված ապստամբներ:

Վերջին տեսակի ապստամբ տարրը յաճախ գործիք է դառնում տեսական յեղափոխականները: Ընդհանուր և առանց երկար ու բարակ մտածելու ամեն մի գործի մէջ մղվում: Տեսական յեղափոխականները, որոնք, ինչպէս ասացի, ոչ մի երական զոհողութիւն անելու արամազիր չեն, միշտ պատրաստ են շոյելու անդիտակից ապստամբ տարրին, նրան երես տալ, շափից աւելի զովեստներ շալլել, նոյն իսկ այն պարագահերում, երբ ոչ թէ զովել, այլ պէտք է դատապարտել, և այդպէսով անդիտակից ապստամբ տարրը հետզհետէ փրչանում, լիտիանում և կամաց կամաց բռնում է այն գիրքը, ինչ գիրք որ բռնում են միայնակները փշրանքներից ոգտվող զինուորները:

Երկայայնում է պարբերական մեռելութիւն և կենդանութիւն. ու այդպէս տեսում է մինչև զտու՛մ: Ամբողջովին կենդանանում է երբ գործերի վեկը անցնում են զուտ ապստամբ վարիչների ձեռքը, մեռնում, երբ տեսականներն են վարում այդ գործը:

ՎԱՐԴՈ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Մակեդոնիան եռուզեռի մէջ է. որ չափ Ռուսիա և Աւստրիա կը փափակեն որ այդ գծախառն երկրին մէջ ապստամբութեան հրդեհը չը բռնկի, այնու ամենայնիւ այս ու այն կողմէն կրակի ոչ թէ կայծեր այլ բոցեր կերեւան, և կսպանան բոցավառել ամբողջ Պալքանեսան թերակղզին:

Պալքանեսան թերակղզին որոնք ամեն կողմէ սպանալիքներ կը կարգան Մակեդոնացիներու շարժումները չը քաջալերելու, մինչև անգամ արգելք հանդիսանալու, կը պատասխանէ որ ինք միայն պարտական է իր երկրին մէջ գտնուող մակեդոնացիները զսպել, բայց թուրքերն ոչ, ապստամբ Մակեդոնացիներու վրայ ազդել անկարող է և ոչ պատասխանատու հոն տեղի ունեցած ապստամբական շարժումներու հետեւանքներուն:

Ամբողջ Եւրոպա, այսպիսի սրտին մէջ աչքերը յառած է Մակեդոնիոյ վրայ, ուսկէ պիտի ծագի այն հրդեհը, որմէ կը գողան ամենէն մեծ պետութիւնները: Սուլթանն ալ զօրքերուն թիւր կը շատցնէ Մակեդոնիոյ մէջ: Տեսնա՛ք . . .

Վերակազմալու հին Հնչակեանները միացան: Վեց տարուան բաժանումէ, զիրար բռնկուելէ, նախատեղէ, հայհոյելէ վերջ, կեդրոնի հրամանով ձեռք ձեռքի տուին և համբուրուեցան. այն մարդիկ որոնք զիրար թուրքէն աւելի կատէին. կեդրոնի հրամանով լաճուեցան, կեդրոնի հրամանով ալ համբուրուեցան ու միացան: Միխիթարական գործ, բայց նշանակելի. — կեդրոններու հրամանով կարելի է առել և սիրել. կարելի է մէկը ստոր: և բարձր ճանչնալ. բաւական է որ կեդրոնները այդպէս հրամայեն:

Կը կրկնենք, շատ ուրախ ենք որ միացան, և կը փափայնենք որ այսուհետեւ այս ևս միակ կեդրոնը միայն իրար սիրելու հրամաններ արձակէ:

Պէյճիքայի մէջ գործաւորական շարժումները հետզհետէ կը զօրնգանան ու սպաննացող կերպարան կտունեն: Չինուորները և ոստիկանները խաղաղութիւնը վերածատուտեղու համար կը պարտաւորուին զէնքի դիմել: Գործաւորները այդ շարժումներով ընդհանուր ձայնատուութեան օրէնք կը պահանջեն:

Որ կողմ աչք դարձնես, իրարանցում, մաքառում, կռիւ կա: զրբկուտ գոտակարգը ուժով իրաւունքներ կը պահանջէ ճնշող, կառավարող և զէնք բռնող գոտակարգէն: Եւ 20րդ դարը բոտ երեւոթիւն աւելի արիւնտա դար մը պիտի ըլլայ կարծես:

ԿԵՏ

ՓՐԱՆՍԱՑԻՆԵՐՈՒՆ

(ՆՈՒԷՐ ԻՄ ՍԻՐԵԼԻ Գ. Խ. ԻՆ)
Վիզգոր Հիւլիօի անոր, արտասանուած Բարիկի մեջ 1870 սեպտեմբեր 17ին:
Եղբայրարար ազգարարեցինք Գերմանիոյ, Գերմանիա իր քաղերը շարունակեց Բարիկի վրայ:
Նու մեր դռները հասած է:
Միտպետութիւնը յարձակեցաւ Գեր

մանիոյ վրայ, ինչպէս որ յարձակած էր հանրապետութեան վրայ, յանկարծակի մատնիչօրէն. ու այսօր Գերմանիան այն պատերազմին համար զոր միապետութիւնը իր դէմ մղեց, վրէժք հաւարակապետութիւնէն կը լուծէ:

Թող այնպէս ըլլայ, Պատմութիւնը պիտի դատէ:
Ինչ որ հիմա Գերմանիան պիտի ընէ իրեն կը վերաբերի. բայց մենք, Ֆրանսա մենք պարտականութիւններ ունինք ազգերու և վարդկային սեռի հանդէպ:

Կատարենք մեր պարտականութիւնները: Պարտականութեանց առջինը օրինակն է:

Սին վայրկեանը՝ ուր մենք ենք, ժողովուրդներու ամենամեծ ճգնաժամն է: Ամեն ոք իր չափով թող տայ: Ֆրանսան այն առանձնաշնորհը ունի, ինչպէս ժամանակաւ Հոմերու և Յուլիանոսի, և իր կորուստը քաղաքակրթութեան յետադիմութիւնը կը նշանակէ:

Ուր է այժմեան մարդկութիւնը, մենք կը տեսնենք այդ: Եթէ պատահէր, ինչ որ անկարելի է, որ Ֆրանսան խղիւղէր, խորատու ջրանակութեան որուն պիտի նիւթարկուէր նա: մարդկային սեռի մակարդակին ցածնար կը նշանակէր:

Սակայն Ֆրանսան չը պիտի մեռնի: Այն պարզ պատճառով գործարքը: Նա իր պարտականութիւնը պիտի կատարէ:

Ֆրանսան իր իր ազգերու, իր իր մարդկանց պարտական է Բարիկն ազատել, ոչ թէ իրեն համար, այլ ամբողջ աշխարհի: Այդ պարտականութիւնը Ֆրանսան պիտի կատարէ:

Թող բոլոր թաղերը վեր կենան, թող բոլոր դաշտերը հրակ տանեն, թող բոլոր անտառները գոտացող ձայներով լեցուին:

Ճգնաժամք, ճգնաժամք, թող ամեն առնէ զինուոր մը դուրս գայ, թող արտարձանը գունդ գառնայ, թող քաղաքը բանակի վերածուի:

Իրուսիացիները 800,000 հոգի են, դուք քառասուն միլիոն էք: Վեր ելէք ու փչեցէք անոնց վրայ:

Լիլ, Նանթ, Թուա, Պուրթ, Օրլէան, Տիփոն, Թուրք, Պայոն շարքերը սեղմեցէք:

Օ՛ն Լիոն, հրացանի առ, Պոտո գարապիկի վերջուր, Ռուէն սուրբ քաչէ և դու Մարսէլլ քու երգը իրգէ ու սոսկալի ելիր:

Իսպա՛ք, յաղա՛ք, քաղա՛ք, աչգերէ անտառներ կազմեցէք, ձեր սուրբները թանձրացուցէք, թողանոթները լծեցէք և դու ո՛վ գիւղ կա-

տաղութիւնդ հազիր :

Վասնզ չիկայ, փամփոռչտ չիկայ, թնգանթածիկներ չիկան :

Սխալ է, կան : Զուեցեցեցի գիւղացիները միայն կացիներ ունէին, Բողոնիացի գիւղացիք միայն գերանգիներ ու պրըթօններ բերեր : Մակայն ամեն ինչ կաներեւոյթանար իրենց առաջ :

Ամեն բան ձեռնառու է անոր, որ լաւ կընէ :

Մենք մեր առնն ենք :

Նշանակը մեզի նպատաւոր պիտի ըլլայ, քամին մեր կողմն է, անձրեւը մեր կողմն է : Պատերազմ կամ անօթ :

Ո՞վ կը կամենայ կարող է :

Գիշ ճրացան մը սքանչելի է, եթէ սիրտը լաւ է, հին դաշտի կտորած կտոր մը անպարտելի է, եթէ զայն բռնող բազուկը կարծ է :

Նաբոլէոն Սպանիացի գիւղացիներուն զէմ էր որ խորատկուցաւ : Օ՛ն անմիջապէս, առանց որ մը կորսնցնելու, առանց ժամ մը կորսնցնելու թող իւրաքանչիւրը՝ հարուստ, աղքատ, գործաւոր, պուրժուր, երկրագործ իր տունէն կամ գետնէն առնէ ինչ որ զէնքի մը կը նմանի կամ պայթուցիկի մը :

Ժառեր գլորեցէք, սալայտակի քարերը կուտեցէք, խոփերը կացիներ վերածեցէք, տկանները փոսերու, կուտեցէք անով, ինչ որ ձեր ձեռքին տակ լինայ, մեր սրբազան երկրին քարերը պոկեցէք, քարկոծեցէք արշաւողները մեր Մայր Ֆրանսայի՝ սակորներով : Ո՞վ քաղաքացիներ ճամբու քարերուն մէջ ինչ որ թշնամու երեսին կը շարժէք, հայրենիքն է :

Թող բոլոր մարդիկ Գամիլ աէ Մուլէններ ըլլան ու բոլոր կիները թէրուաններ, թող բոլոր շախմատները Պարբաններ լինին :

Ընէ՛ք ինչպէս Պոնպօնէյ՝ յովազի որսորդը, որ 15 հոգով 20 Բրուսիացի սպաննեց և 30 կալանաւորեց :

Թող քաղաքներու փոփոցները թշնամին յոյսան, թող պատուհանը կատարողէն բացուի, թող բնակարանը իր կարասիները նետէ, թող տանիքը իր կովմետրները աթոյէ, թող ձեր սրտմտած մտքերը իրենց ձերմտի մագերը վկայ կոչեն :

Թող գերեզմանները աղաղակեն, թող իւրաքանչիւր պատի կտուր գոցուի Աստուած և ժողովուրդը, թող բոց մը ելլէ երկրի չոր կողմէն, թող ամեն ցախ անուշիկ խորոյկ մը դառնայ :

Այստեղ ջախջախեցէ՛ք, այնտեղ շանթեցէ՛ք, գործախուժներուն առջեւ առէ՛ք, ազգամթերքի շղթան կարեցէ՛ք, խորատկեցէ՛ք կամուրջները, ճանապարհներ քակեցէ՛ք, հողը փլուցէ՛ք ու Ֆրանսան Բրուսիոյ տակ թող սնդուկը լինի :

Ա՛հ, ժողովուրդ, ահա քարանձաւի մէջ նեղը ինկած :

Բաց ըրէ՛ք առ յանկարծակիս կերպարանքդ :

Ցոյց տուր աշխարհի քու ջախջախիչ զարթումիդ հրաշքը :

Թող ԾԶի առիւծը բարձրանայ ու քստմնի եւ թող քու բաշիղ ցնցումով երկիւղեան սեւ քաղնեղու անհուն պարի աներեւոյթանալը տեսնուի :

Պատերազմներ գիշեր ու ցերեկ պատերազմ լեռներու վրայ, պատերազմ դաշտերու մէջ, պատերազմ անտառները : Ոտքի՛, ոտքի՛, ո՛չ խաղաղութիւն, ոչ հանդիստ, ոչ քուռ :

Բռնութիւնը ազատութեան վրայ

կը յարձակի : Գերմանեան Ֆրանսան կը մօրթէ :

Թող մեր երկրի մտայն սօթին առաջ այդ հսկայ բանակը հալի ձիւնի պէս : Թող երկրի եւ ոչ մէկ կէտի վրայ պարտականութիւնը գտնց առնուի :

Հայրենիքի սոսկալի ճակատամարտը կազմակերպենք, Ո՞վ համարձակ նշանառուներ, գնդակ, անցէ՛ք մացաններէն, ցատկեցէ՛ք հեղեղներու վրայէն, օգտուեցէ՛ք մութէն ու վերջապէս, կեղեղանդերու մէջ օճապոստայ եկէ՛ք, սահեցէ՛ք, մագլցեցէ՛ք, յարմայուեցէ՛ք, քարեցէ՛ք, ոչնչացուցէ՛ք արշաւանքը : Պաշտպանեցէ՛ք Ֆրանսան հերոսարար, յօրտաճատողէն, դպրանքով :

Սոսկալի եղէք ո՞վ հայրենասէրներ, միայն կանգ առէ՛ք, Երբ խրճիթի մը առջեւէն կանգնիք մրտիող փոքրիկ մանկան ճակատն համբերելու : Բանդի տղան ապագան է, Վասնզի ապագան, հանրապետութիւնն է :

Ընենք այդ Ֆրանսացիներ, գալով եւրոպայի, ի՞նչ պէտք է մեզ, թող գիտէ եթէ ազգեր ունի : Թող մեզի գան, եթէ կուզեն, մենք օճանակ չենք մուրար, եթէ եւրոպան կը վախնայ, թող վախնայ :

Մենք եւրոպայի ծառայութիւն կը մատուցանենք ահա բոլորը : եթէ նա յարմար կը դատէ թող տեղէն չի շայտի :

Չարհւերելի ճետեւանքը զոր Ֆրանսան կըրուէն, եթէ Գերմանիան զինքը ստույգէ, Ֆրանսան կը բուռն ֆրանսային եւ Բարիզը կը բուռն Բարիզին : Բարիզը միշտ աւելին տուած է ինչ որ ինք չէ բնդուած, եթէ նա կը յանձնարարէ ազգերը զինք պաշտպանել, այդ աւելի իրենց շահուն համար է քան իրեն :

Թող բնին ինչպէս որ կուզեն, Բարիզը մարտու չի պաղատիր, այնքան մեծ պաղատիչ մը զոր պատմութիւնն իսկ պիտի զարմանար :

Եւրոպա՛ կուզես մեծ կուզես փոքրը եղիք, այդ քու գործդ է :

Հրդեհեցէ՛ք Բարիզը Գերմանացիներ, ինչպէս որ հրդեհեցէ՛ք Մթրազպուրկը : Աւելի բարկութիւններ պիտի հրդեհէ՛ք քան առններ : Բարիզը ամբողջն ունի, պատնէջներ, փոսեր, խոյանթիներ, կամարներ, վանդակապատեր, ընդգծեանալ աղաններ, նա վառող ունի, քարիւղ եւ նիթրոգլիսերին, 300,000 զինուած քաղաքացիներ կան, պատուր արդարութիւնը, իրաւունքը, սրտմտած քաղաքակրթութիւնը կեան իր մէջ : հանրապետութեան վարդազոյն հողը կուռչի իր խառնարանին մէջ, արդէն իր կողերուն վրայ լաւալի հոսանքը կը սարածուի ու կերպարանաւորի, եւ նա լի է, այս գործը Բարիզը՝ մտղկային հողու բոլոր պայթուցիկներով, Հանդարտ եւ զարհուրելի նա արշաւանքին կրտստէ եւ կըզգայ իր ետ ու ետի բարձրանալը :

Հրաբուխ մը օգնութեան պէտք չունի :

Ֆրանսացիներ, դուք կը կոռիք, դուք կը զոհուիք տիեզերական գատին համար, վասնզի հարկ է որ Ֆրանսան մեծ ըլլայ որպէս զի աշխարհ փրկուի, որովհետեւ պէտք չէ որ այնքան արին թափուի ու այնքան ոսկրտիք ձերմիտն առանց ազատութիւն ծնուելու :

Բոլոր հոշակաւոր ստուերները, Լէոնիդաս, Բրուտոս, Արմէնիոս, Վալինիթիւս Թիկո, Մանլէն այնտեղ ձեր շուրջն են, հպարտ եւ ժպտուն :

Վասնզի ժամանակն է ցոյց տալու որ առաքինութիւնը կայ, որ պարտականութիւնը գոյութիւնը ունի եւ հայրենիքը կապրի, ու դուք չէք սրկարանար, դուք մինչեւ ծայր կերթաք եւ աշխարհ ձեզմով պիտի լծանայ, որ եթէ քաղաքականութիւնը վատ է, քաղաքացին քաջ է, որ եթէ թագաւորներ կան, ժողովուրդներ ալ կան, որ, եթէ միապետ դատաքը կը խաւարի, հանրապետութիւնը կը փողփողայ, եւ որ, եթէ այս վայրկեանս եւրոպա չի կայ, միշտ Ֆրանսայ մը կայ :

Զարեհ
1902 Ապրիլ 10
Ծիրիկ

ՓՈՍՏԵՐ ԵՒ ԴԵՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Առաջին նամակ)

Թարիկ 42 մաս

Ատրպատականի հայ գաղութը, ինչպէս գիտէք, ստացաւ ժողովրդական ընտրողական իրաւունք : նա ընտրեց իր առաջնորդը, և ինչպէս յայտնի է, երկար օրեր մտնեցին և խաղերից յետոյ, ձայներ ձեռնամասնութեամբ ընտրեց Նիկիտ Գ. Մուրատեանը : Ընտրութիւնը յաջող է, այդպէս էրն դատուած շատերը, ևս էլ այդպէս էի մտածում : նա էլ լաւ է, որ Նիկիտ վարդապետը գործունեայ է, ունի գործելու եռանդ և ցանկութիւն, պատմում էին, որ նա բարձրագոյն կրթութիւն է ստացել և ունի որոշ պատրաստութիւն, կարգացել էի, որ նա լուսավիտ և առաջադիմական է, ունի որոշ ուղղութիւն և այլն :

Ահա թէ ինչպէս ընտրութիւնը ուրախացրեց ինձ : Արդէն լրանում է հինգերորդ ամիսը, ինչ նորընտիր առաջնորդը ստանձնել է իր պաշտօնը : Բայց այդ քան ժամանակաւ վարած նրա գործունեութիւնը արդարացին է արդեօք մեր յոյսերը, նա այնպէս ներկայանում է մեզ, ինչպէս լսել էինք նրա մասին :

Գրականապէս կարող ենք ասել, որ բոլորովին հակառակ ենք տեսնում, այդ ասում ենք փաստերի վրա : հիմնած ի հարկէ : Մենք մինչեւ այժմ եղիչէ վարդապետին ճանաչում էինք հեռուից, ուրիշի պատմածով, բայց այժմ նա մեր մէջն է, այժմ հարաւորութիւն ունենք նրան աւելի մօտիկից ճանանչել, հետեւել նրա ամեն մի ձեռնարկութեան, ամեն մի քայլին :

Հէնց դրա համար է, որ հետազոտեցի, որ օրի վրա, պատուում է նրա քոյր և օրի տակից երեւում է նրա իսկական գոյնը, նա մերկանում է ներկայանում է մեզ իր ճիշտ էութեամբ :

Առաջնորդը հէնց այն ժամանակ սկսեց իր իսկական գոյնը ցոյց տալ, երբ դիմեց հրապարակա-

կան ստախոսութեան իր մի հերքումով (*) և այդ արեց իր հակապարզանքին շոյելու համար, որպէսզի կարողանայ գործը յաջող տանել : Ինչ գրոշ արժէ այդպիսի ձեւերով կատարած գործը :

Մարդ թող գործի իր իսկական համոզմունքներ ճամաւայն, աշխատի անգույ, առանց շեղելու իսկական շարժից և եթէ գիմա, զիր զօրեղ ուժից ընկնում է, թող ընկնի, դա, լիմ կարծիքով, շատ աւելի համակրելի և գնահատելի է, քան այն, որ հոմարոմիտներ է գիմում, մանաւանդ, ինչպէս մեր առաջնորդը արեց, ստախոսի դեր է յանձն առնում գործի աջոյութեան համար, ճարտակեանք, շատ փաստեր կան :

Սր օրիորդ և երիտասարդ սրբելու են եղել միմեանց, ևրկար նամակագրութիւն են ունենում, նոյնիսկ խօսք են տւած լինում իրար հետ ամուսնանալու, բայց յետոյ օրիորդը ստախոս է, նա այլ եւս չի սիրում և հրաժարում է : Սրա հայրը, որ խոր է, աղջկան գլխից առաջ անելու համար աշխատում է զօռով և ստիպելով ամուսնացնել, երիտասարդն էլ ձգտում է աղոթեցնել, բայց աղջիկը, չը նայած այդ սպանալիքներին, կրկին ու կրկին հրաժարում է : Գործը, ինչպէս է լինում, հասնում է առաջնորդին : Սպասում է ինք, որ ստախոսորդը կը յարգի օրիորդի զգացմունքը և ետ կը կանգնեցնի ինչ որ և այն երիտասարդին իրենց ապօրինի և անմիտ պահանջից, բայց ընդհակառակը առաջնորդն էլ միանում է վերջիններին և աւելի խիստ կերպով է պահանջում մի շարք կեցտոս, անվայել հայհոյանքներ է թափում խեղճ աղջկայ գլխին, այն էլ շատերի ներկայութեամբ, թէ ինչ վերջ ունեցաւ այդ խնդիրը այնքան էլ հետաքրքիր չէ մի այդ դէպքն էլ շատ բան է պարզում : Ահա մեր «ազատամիտ» կաշուած հոգեւորականը :

Թարիկի «լսարանական» ընկերութեան մասին անշուշտ գիտէ ընթերցողը, դա մի հիմնարկութիւն է, ուր պարբերաբար կարգացում են կարող անհասուների կողմից մտաչելի և հետաքրքիր գաստախոսութիւններ : Անչեալ տարի, իմիջի ալլոց, խօսեց նաեւ գործարանաւոր մարտիներին առտիճանական զարգացման մասին : Դասախօսը, որ սուսեցի էր, սկզբնական սաղմ ընդունեց պրոսոպայազման, որից ստախոսաբար զարգանում է վերջապէս բարատրեց այնպէս, ինչպէս գիտութիւնն է ընդունում :

(*) Այդ հերքման զէմ գրել է ճարտարագետ, տես թիւ 393 :

յարգալի գործնական աջակցութեան մեր նախանձոտներ հրահրած ինչ ինչ ծածկանուններով սկսան երեւիլ զԻրաւունքն մէջ և անապիւ զրպարտութիւններով սուտեր յիւրիւրել «ՀԱՅԵԼԻ» մէջ :

Միջանկեալ ըսենք, որ յիշեալ երկու թերթերու պատ. խմբագրութեանց դէպի իրենց թղթակիցներն ու լրագրատուները ցոյց տուած ու տածած վստահութիւնը միշտ ենթականերու կողմանէ ի չարէ գործածուած է, և նոյն իսկ խմբագիրներու գրած նամակներն ու հրահանգները ուրիշներու ալ ցոյց տրուած է. այս մասին մենք ուրիշ թղթակցութեամբ մը կը խոստանանք մանրամասնել խնդիրը :

Մեր վարժարանաց և ուսուցչական մարմնոց նկատմամբ ցարդ ըսածներէն դիւրին է մակարերիլ թէ՛ Ուսուցչական մարմնոց անկարողութեան և վարժարանի մէջ ու անկէ դուրս ունեցած թերութեանց և պարտազանցութիւններուն մեղսակից է նաեւ հոգաբարձութիւնը, որ իր պաշտօնը խղճի մտքը ու անաչառութեամբ կատարած չըլլալէ պատ. իր անտարբերութեամբն ու հոգաբարձական իրաւանց անգիտակ ըլլալովը, վարժապետները անուղղակի կերպիւ քաջալերած և վարժարաններն ալ յետին անկաճութեան մատնած է. թէ՛ ինչո՞ւ, յաջորդով :

Վասակ Սիւնի

Շուկա 31 մարտ 1902

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Քայանքը, 28 մարտ 902

Խմբագրութիւն

Ներիակեալ կընդունիք 10 լէվոց թղթատարական պօն մը զոր պիտի գանձէք քաղաքից թղթատուէն. նոյնպէս ներիակեալ կը զիւմ ձեզ 50 սանթիմի նամակագրոյ մը ընդ ամենը 10.50 լէվ արծաթ :

Այս դրամը անմահ Պետոյի յիշատակին կազմուելիք հաւարածոյին համար հանգանակուածէն քովս մը նազածն է զոր նուիրած են հետեւեալները :

Տիկին Աւարայր	5. լէվ
Պրն. Ա. Ա.	5. 50
	10. 50

Յարգանք
Ա. Յ. Սըվաճեան

Նախորդ 137 լէվ 30 սնթի հետ խմբագրութեանս մօտ կը գտնուի 147 լէվ 80 սնթ.

Խմբագրութիւն

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հմայեակ եպիսկոպոս Գիմաքսեան Պատրիարքարանի գրաւոր դիմումը րած է որ իր անունը ջնջուի Պուլկարիոյ և Ռուսմանիոյ այցելու հովուութեան համար կազմած ընտրելեաց ցանկին մէջէն : Գիմաքսեան իր հրաժարելու պատճառ կը բռնէ ծերութիւնը և սկարութիւնը :

— Այնթափի գուլէժի ուսու-

ցիչները մատնաւոր կերպով հոգ տանիլ սկսած են հայերէն լեզուի :

— Պուլկարիոյ այցելու հովիւ մը զրկելու խնդիրը խառն ժողովի որոշումով յանձնուած էր Վահրամ եպիսկոպոս Մանկունիի քննուելու համար :

Այժմ Վահրամ եպիսկոպոս առաջարկութիւն մը պատրաստած է, բանիբուն և կարող վարդապետի մը յանձնելու համար այդ փափուկ և կարեւոր պաշտօնը, որպէսզի Պուլկարիոյ և Ռուսմանիոյ անխնամ մնացած վիճակները կազմակերպէ, ժողովներ և թագական խորհուրդներ կարգէ և ընդհանուր քուէարկութեամբ մնայուն եպիսկոպոս մը ընտրէ :

— Պագուի և Կովկասեան ուրիշ հայաբնակ քաղաքներու մէջ հոգեհանգիստներ կատարուել են Կիւրքանի Երէցեանի յիշատակին :

— Վահան Ծ. վարդապետ Յակոբեան համաձայնած է Պուլկարիոյ այցելու հովիւ ըլլալ :

— Վառնայի նիզոյցի վարժարանները զոցուած են մանկական հիւանդութիւններու պատճառով, զոցուած են նաեւ պուլկար գալուցիները :

— Ֆրիլիպէի Գրասիրաց ընկերութիւնը ընդարձակ հաշիւ մը շրկած է իր գործունէութեան համար. այդ հաշուէն կերելի որ Գրասիրաց ընկերութիւնը բաւական եւանդով գործած է :

Յանկալի է որ այդ եռանդը շարունակուի : Գծախտաբար չը պիտի կրնանք հաշուեցուցակը հրատարակել շափալանց երկար ըլլալուն համար :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանը Ռուս և աւստրիական զեսպաններու պահանջումով համաձայնել է սրբայ Ֆիրմիլիանը Իսկուպի միթրոպոլիտ ըլլալու համաձայնութիւնը տալ, չը նայած որ այդ նահանգին բնակչութեան ահագին մեծամասնութիւնը Պուլկար է :

— Ռուսիա կը պատրաստուի հին Սերպիոյ մէջ հիւպատոսութիւններ հաստատել :

— Նովի—Բաղարի մէջ խաղաղութիւնը վերահաստատուել է. որովհետեւ թուրք կառավարութիւնը զիջումներ ըրած է ալպանացիներուն, քաղաքացիներ ազատ արձակելով և կրկին իրեն պաշտօնին մէջ դնելով :

— Պուլկար էկզարքը Սուլթանի յայտարարած է որ ինք կը հրաժարի, եթէ Ֆիրմիլիան Իսկուպի միթրոպոլիտ կարգուի :

Պ Ո Ւ Լ Կ Յ Ր Ի Ա

Պուլկարիոյ մէջ յուզումը մեծ է Ֆիրմիլիանի Իսկուպի Մետրապոլիտ կարգուելուն պատճառով :

Սօֆիայի մէջ բոլոր կուսակցութեանց պետերը միացած հետեւեալ հեռագիրը ուղղած են Պուլկար պուլկար էքզարխին :

«Պուլկար ժողովրդին անունով ամենաջնեմ համակրութիւն կը յայտնենք ձեզի Ֆիրմիլիանի Սկուպի Մետրապոլիտ օժուելուն դէմ ըրած քայլերուդ համար :

Գործեցէք յանդգնօրէն և յուսացէք մեր ընդհանուրիս աջակցութիւնը ի պաշտպանութիւն պուլկար Սուրբ Եկեղեցիին իրաւունքներուն » :

Ստորագրած են. Տրական Յանքոյ, Բ. Քարալէլով, Իվան Կէշօֆ, Տօթթ, Բատուլալօֆ, Բոյչօ Բէթթով և Տիմիթրի Բէթթով և ուրիշներ :

— Պուլկարական շատ մը քաղաքներուն մէջ, ինչպէս նաեւ Վառնա, միթիկներ տեղի ունեցան Ֆիրմիլիանի օժուելուն դէմ բողոքելու համար :

— «ԲՈՒԹԻԱ» թերթը կը հալորդէ որ անչեալ շաբաթ օրը արտաքին գործոց նախարարը, Իեթերոպուրկէն ստացած հեռագրի մը համաձայն, կանչել է Մակեդոնական Բ. Կոմիթէի անդամները և յայտարարել է.

«Այսօրու ընէ սկսեալ կառավարութիւնը չը պիտի ճանչնայ Մակեդոնական Բ. և Կոմիթէի գոյութիւնը, որուն համար և Բ. Կոմիթէին կառավարիչ իր հաշիւները վերջացնել և վերջ տալ իր գոյութեան » :

Կոմիթէի անդամները պատասխանած են որ իրենք համաժողով մը ընտրուած են, որը և միայն ձեռնահաս է կառավարութեան առաջարկները կատարելու :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բէթերոպուրկի մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին Ֆրանսայի նախագահը Լուպէն ընդունելու համար :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիոյ և եւրոպական քանի մը թերթեր մեծ յայտարարութիւններ խաղաղութիւն կնքուելու մասին : Ի՞նչու գեռ երկուստեք բանակցելու համար զինադադար չէ եղած, բայց կը պնդուի թէ բոլոր պօէր կարեւոր զօրութիւնները և պաշտօնեաները հակամէտ են հաշտութիւն կայացնելու :

Պ Ե Լ Ժ Դ Ա

Ընկերվարականներու ցոյցերը հետզհետէ վտանգաւոր կերպաւոր անցնելու ոչ միայն Պրիւքսէլի, այլև ուրիշ քաղաքներու մէջ : Երկիրը գրեթէ պաշարման վիճակի մէջ կը գտնուի :

Ի Տ Ա Ի Մ և Ջ Ո Ւ Ի Յ Ե Ր Ի Ա

Երկու կառավարութիւններու դիւանագլտական պաշտօնական յարաբերութիւնները խզուած են : Այդ խզումին պատճառը հետեւեալն է :

Անցեալներ Ջուլիցերիոյ ընկերվարական թերթերուն մէկուն մէջ, Հումպէրթօ թագաւորին սպաննող Պերուիէ առաքեալ կոչուած է : Իտալիոյ դեսպանը պահանջած էր որ այդ թերթի խմբագիրը պատժուի և բաւական կոպիտ ձեւով մը : Ջուլիցերիոյ կառավարութիւնը յարաբերութիւնը խզեց Իտալիոյ դեսպանին հետ. նոյնը ջրաւ և իւրաքանչիւր կառավարութիւնը Հոմիլի զուրկեցրական դեսպանին հետ :

Կը կարծուի որ այս միջադէպը շուտով և խաղաղութեամբ պիտի կարգադրուի :

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

Թէեւ Տօպրիչը Պուլկարիոյ պղտիկ քաղաքներէն մէկն է, ուր նկարչութեամբ և լուսանկարչութեամբ կը պարապիմ, չը նայելով որ գընուած շրջանակ ալ շատ յարմար չէ մեծ յոռաղիմութեան, բայց միշտ աշխատած եմ յետամուտ լլլալ արուեստին գիտական և արուեստական ամենավերջին կատարելագործելու թեանց քայլ : առ քայլ հետեւիլ. այսօր ունիմ արուեստին ամենավերջին կատարելութեամբ օժտուած գործերներ, որոնց հետ միասին չնորհիւ նաեւ նկարչութեան արուեստիս, այսօր կարող եմ արտադրել ակունքիս ամենակատարելագործուած պատկերներ, որոնք մասնաւոր կերպով մշակած եմ և որուն մէջ նրկարչութիւնը մեծ դեր ունի :

Ասիկայ փորձելը դժուար չէ. կըրնաք ձեր մէկ լուսանկարը շրկել իմ հասցէին և պիտի ստանաք մեծադիրը, օրինակին ճիշդ նման, միայն 15 Ֆրանքի փոխարէն. այն ալ ստանալէ և հաւնելէ վերջը վճարելու պայմանաւ :

Իսկ անոնք որ կտաւի վրայ իւրաներկ բնական գոյներով պատկերին կուզեն ունենալ, պէտք է ընդհանուր գաղափար մը տան նոյն անձին գոյնին նկատմամբ. (երեսի բնդհանուր գոյնը, աչքերու և մազի գոյնը) բնական մեծութեամբ 35 Ֆրանք արժող. կրկին վերոյիշեալ պայմաններով :

Թէեւ շատ տեղեր ակունքիս պատկերներ կը պատրաստեն, բայց ևս կը փոտանցնեն որ ևս ոչ մէկը այնչափ կատարելագործուած կրնայ ըլլալ, որչափ նկարչի մը պատրաստածը. վասն զի առանց կանոնաւոր ուղիղ ղեկ ոչ մէկ ակունքիս արժէք կրնայ ունենալ :

Հասցէ
Ն. Սիսակեան Նկարիչ—Փօթօկրաֆ
Տօպրիչ
2—4

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печ. Взаимность — Варна